Առաջարկություններ և դիտարկումներ «Ազգային փոքրամասնությունների մասին» և «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքների և հարակից օրենքների նախագծերի վերաբերյալ

1. «Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ *Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնություններն են՝ ասորիները, բելառուսները, գերմանացիները, եզդիները, լեհերը, հրեաները, հույները, ռուսները, վրացիները, ուկրաինացիները, քրդերը:* Գտնում ենք, որ նման սպառիչ ցանկի սահմանումը զրկում է ՀՀ այլ ազգային փոքրամասնություններին՝ սույն օրենքով ընձեռված իրավունքների իրացումից: Առաջարկում ենք նման ցանկը չնախատեսել որպես սպառիչ ցանկ:
2. «Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, *Խորհրդի անդամների թեկնածությունն առաջադրում են ազգային փոքրամասնությունների կազմակերպությունները՝ այդ մասին տեղեկացնելով Հանրային խորհրդի նախագահին: Յուրաքանչյուր ազգային փոքրամասնությունը ներկայացնող մինչև երկու թեկնածու առաջադրվելու դեպքում նրանք դառնում են Խորհրդի անդամ: Երկուսից ավելի թեկնածու առաջադրվելու դեպքում Խորհրդի անդամներին ընտրում է Հանրային Խորհուրդը:* Առաջարկում ենք նախատեսել հստակ չափանիշներ առ այն, թե ինչպես են առաջադրվելու թեկնածուները ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների կողմից, և ինչպե՞ս է Հանրային խորհուրդը ընտրելու 3-ից ավելի թեկնածուների դեպքում:
3. «Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծով չի կարգավորվում, թե նույն անձը քանի անգամ կարող է հանդես գալ որպես խորհրդի անդամ: Առաջարկում ենք նախատեսել առավելագույնը 2 անգամ որպես խորհրդի անդամ հանդես գալու կարգ:
4. «Ազգային փոքրամասնությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի 18-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *Խորհրդի հերթական նիստերը կազմակերպվում են առնվազն*

կիսամյակը մեկ անգամ: Գտնում ենք, որ առավել արդյունավետ գործելու նպատակով անհրաժեշտ է նախատեսել առնվազն երեք ամիսը մեկ անգամ նիստեր կազմակերպելու կարգ:

5. «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է բարոյական վնասի փոխհատուցում ստանալու իրավունք: Բնականաբար, նշյալը վերաբերվում է ցանկացած դեպքում խտրականության ենթարկվելուն: Սակայն, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ մասով նախատեսված է, որ բարոյական վնասի փոխհատուցում կարելի է պահանջել միայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտված իրավունքների համար: Նշենք, որ միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ առհասարակ սուբյեկտների սահմանափակում սույն հարցի շրջանակներում չկա, որի արդյունքում հնարավոր է ոչ նյութական վնասի հատուցում պահանջել նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից թե խտրականության արգելքի, թե՝ այլ իրավունքների խախտումների համար: Ուստի, առաջարկում ենք փոփոխություններ կատարել նշյալ հոդվածում և սուբյեկտների ցանկում հավելել ֆիզիկական և իրավաբանական անձանց:
6. «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում են սկզբունքները, որոնք չեն ներառում հաշվետվողականության սկզբունքը: Առաջարկում ենք սկզբունքների ցանկում ներառել հաշվետվողականության սկզբունքը:
7. Առաջարկում ենք փոփոխություններ կատարել «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծում և նախատեսել նաև հաշվետվողականության սկզբունքի կիրառման գործուն մեխանիզմներ, ինչպիսիք են որոշակի ժամկետներում խորհրդի գործունեության հաշվետվությունների ներկայացումը մարդու իրավունքների պաշտպանին և հանրությանը:

8. «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի 15-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված են իրավահավասարության խորհրդի անդամ նշանակվելու պահանջները, որոնցում նշված է ՀՀ քաղաքացիության առկայությունը: Հաշվի առնելով իրավահավասարության խորհրդի դերն ու առաքելությունը՝ առաջարկում ենք չցուցաբերել խտրական մոտեցում և չնախատեսել ՀՀ քաղաքացիության պահանջ, այլ՝ օրինակ՝ ՀՀ-ում կացության պահանջ:
9. «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի 15-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված են իրավահավասարության խորհրդի անդամ նշանակվելու պահանջները, որոնցում նշված է մարդու իրավունքների պաշտպանության բնագավառին առնչվող գիտական աշխատություններ ունենալը: Առաջարկում ենք նախատեսել նվազագույն շեմ, օրինակ՝ առնվազն 5 գիտական աշխատություններ ունենալը:
10. «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի 8-րդ հոդվածով նախատեսված է, որ յուրաքանչյուր ոք, ով հիմքեր ունի կարծելու, որ իր նկատմամբ դրսևորվել է խտրականություն, իրավունք ունի դիմելու դատարան, Մարդու իրավունքների պաշտպանին կամ համապատասխան վարչական մարմին՝ իր իրավունքները վերականգնելու, նյութական և բարոյական վնասի փոխհատուցում ստանալու համար: Նույն նախագծի 11-րդ հոդվածով նախատեսված են գործատուի պարտականությունները իրավահավասարության ապահովման բնագավառում, որոնք կրում են դեկլարատիվ բնույթ: Գտնում ենք, որ անհրաժեշտ է նախագծով նախատեսել կոնկրետ գործուն մեխանիզմներ, երբ ներքին կարգով կլուծվի աշխատանքային խտրականությունը, օրինակ՝ համապատասխան կանոնակարգերի սահմանում, համապատասխան ստորաբաժանման ստեղծում կամ աշխատակցի սահմանում, երբ կարիք չի լինի նախագծով նախատեսված արտաքին լծակներին դիմել՝ իրավունքները վերականգնելու համար:
11. «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի 6-րդ հոդվածով նախատեսված ձևակերպումը խրթին է և, առհասարակ, ավելորդ, քանի որ գործում են

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված օրենքի նորմերի մեկնաբանման կանոնները: Ուստի, առաջարկում ենք նշյալ նորմը կամ հանել նախագծի տեքստից, կամ հստակեցնել:

12. «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի 12-րդ հոդվածով սահմանված է, որ *հանրությանը հասանելի ապրանքներ մատակարարելիս և ծառայություններ մատուցելիս խտրականությունն արգելվում է,* ինչպես նաև նախատեսված է ոլորտների սպառիչ ցանկ, որոնցում առաջարկվող ապրանքների և ծառայությունների առնչությամբ ծագող իրավահարաբերությունների նկատմամբ տարածվում է խտրականության արգելքը: Գտնում ենք, որ նախ նման սպառիչ ցանկ անհրաժեշտ չէ նախատեսել, իսկ նախատեսելու դեպքում էլ անհրաժեշտ է ներառել նաև մեդիա ոլորտը՝ որպես խոցելի: